# ԱՅՍՐԿՈՎԿԱՍԻ 1840 Թ. ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՄԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ՀԱԿՈԲՅԱՆ Ա. Ա.

XIX դարի 20-40-ական թթ. Այսրկովկասը ցարական կառավարության համակ ուշադրության առարկան էր: Օրակարգում էր Ռուսաստանի ծայրամասի ամրապնդմանն ուղղված բարեփոխումը, որի բաղկացուցիչ մասն էր Արևելյան Հայաստանը: Պատմագիտության մեջ 1840 թ. այսրկովկասյան բարեփոխումը բավական լավ է ուսումնասիրված: Դրան առավելապես անդրադարձել են ազնվական պատմաբաններ Մ. Կորֆը, Վ. Իվանենկոն, Ս. Էսաձեն, իսկ խորհրդայիններից՝ Ի. Պետրուշևսկին, Վ. Պարսամյանը և Ա. Միլմանը: Սակայն բարեփոխման լուսաբանման և գնահատման խնդիրը պատմագիտության մեջ բավականաչափ հետազոտված չէ: Պատշաճ չափով ուսումնասիրված չեն նաև պատմաբանների տեսակետները բարեփոխման էության և նպատակների վերաբերյալ: Այս հոդվածի գիտական խնդիրը պատմագիտական տարբեր դպրոցների (ազնվական-պաշտոնական, ավատաձորտատիրական, լիբերալ-բուրժուական) ներկայացուցիչների՝ բարեփոխման էության, նպատակների և գնահատման մասին առկա մոտեցումների լուսաբանումն է: Աշխատանքը հիմնված է հայ, ռուս և վրացի պատմաբանների հետազոտությունների վրա:

Ազնվական պատմագիտության հիմնական կարծիքը ամփոփված է 1840 թ. վարչական բարեփոխման հաստատակարգի քննարկման մեջ, բայց առանց դրա դասակարգային նպատակները բացահայտելու: «1840 թ. ապրիլի 10-ին սենատին տված անվանական ուղերձի արդյունքում կատարվեց վարչական տեսակետից երկրամասի առաջին ընդհանուր բարեփոխումը՝ վերացումը բնական և պատմական սահմանների, որոնք մինչ այդ բաժանում էին Այսրկովկասի այլացեղ և այլադավան ժողովուրդներին»[1]: Սակայն «չնայած կայսրության ընդհանուր նահանգային և գավառային կառուցվածքին հնարավորինս մոտեցմանը՝ Այսրկովկասի կառավարումը, նաև 1840 թ. հաստատակարգով, դեռ հիմա էլ ներկայանում է շատ«շեղումներով» և անպատեհ «միախառնումներով»[2]:

Բարեփոխման՝ 1841 թ. հունվարի 1-ին հաստատված քաղաքացիական կարգի մասին դրական կարծիք է հայտնել բարոն Ա. Հաքստհաուզենը: Այդ կարգի հետևանքով որոշվեցին զինվորական և քաղաքացիական իշխանությունների փոխհարաբերությունները. վարչական մասը հստակ առանձնացվեց արդարադատությունից և ֆինանսներից: Նա գտնում է, որ Ռուսաստանում գործող օրենքները, տեղական ատյանների և նրանց ազդեցության ոլորտի անվանականը, երկրի և նրա բնակիչների

---

[1] *Исторический очерк и распространение и устройство русского владычества под Кавказом и в Закавказье, СПб., 1852, с. 83.*

[2] Նույն տեղում, էջ 90:

դրությունը մտցվել էին «երկրամասի մնացած Ռուսաստանի հետ փոխ-հարաբերությունների հնարավոր առավել զգալի թեթևացման համար»[3]:

Ըստ Կ. Կոմպանսկու՝ «Ռուսական Այսրկովկասի սահմանների ընդարձակումը առաջացրեց կառավարության մտահոգությունը՝ ստեղծելու նրա համար նոր, առավել լավ կառավարման համակարգ»[4]: Փաստորեն, վերափոխումը հանգեցրեց այսրկովկասյան ժողովուրդների համար քաղաքացիական կառավարման երկու ձևերի՝ մարզին՝ «հատուկ» ռազմաշրջանային կառավարում, և «կայուն կարգ»՝ նահանգի համար[5]: Ըստ Կոմպանսկու՝ բարեփոխումը չէր կայանում ստեղծված կառույցների ծանրաշարժության պատճառով. «անհրաժեշտ էր թեթևացնել ընդարձակ տարածությամբ, տարաբնույթ և մեծ մասամբ այլացեղ ու այլադավան ժողովուրդներով բնակեցված հողերի կառավարումը»[6]:

Միապետական Մ. Կորֆը դրույթ է առաջ քաշել երկրամասում կառավարումը քաղաքականության՝ «տատանումներին» և «հեղաշրջումներին» ենթակա լինելու մասին[7]: «Գործի մեջ պարզվեց տեղական կարիքներին չհամապատասխանող շատ բան, նույնիսկ անհնար կատարման համար, նաև, հակառակ բնակիչների բարքերին և հմտություններին, առաջացրեց դժգոհություն, թյուրիմացություններ»[8]: Նա իշխանության վերակառուցման թերությունների պատասխանատվությունը վերցրել է իշխանությունների վրայից և դրել առանձին անձանց վրա[9]: Նոր կառավարչական կառուցվածքը իր հետ բերեց հաստիքների անհավանական աճ: Երկրամասի համար բարեփոխման հետևանքները հանգամանորեն վերլուծող Մ. Կորֆը գրել է, որ ողջ նոր կառավարումը հանգեցրեց թղթաբանության և սահմանափակվեց «թղթերի ձևական փոխանցումով»[10]: Ոստիկանությունից դատարանի առանձնացումով և «տեղերի բազմապատկումով» զգալիորեն բարդացավ կառավարման մեխանիզմը: Աճեց աստիճանավորների թիվը. եթե նախկին կառավարման ժամանակ նրանք 704 էին, ապա բարեփոխումից հետո՝ 1311: Շեշտակիորեն ավելացան ծախսերը, թեև կառավարումը «չբավարարեց բնակիչների քաղաքացիական պահանջմունքները ո՛չ ոստիկանության, ո՛չ դատարանի, ո՛չ տնտեսության գործերում»[11]:

Ե. Վեյդեբաումը Այսրկովկասի տեղական կառավարման բարեփոխման նպատակ է ներկայացնում «առանձին մասերի կառավարման համակարգում միատեսակության, երկրամասում քաղաքացիության հաստատու-

---

[3] **Гакстгаузен А.,** *Закавказский край, ч. 1, СПб., 1857, с. 62-63.*

[4] **Компансский К.,** *Исторический обзор гражданских учреждений Кавказского и Закавказского края (Кавказский календарь на 1868, Тифлис, 1867, с. 393).*

[5] Նույն տեղում, էջ 393, 394:

[6] Նույն տեղում, էջ 397:

[7] *Из записок барона (впоследствии графа) М. А. Корфа (Русская Старина, т. 101, 1900, с. 25, 26).*

[8] Նույն տեղում, էջ 40:

[9] Նույն տեղում, էջ 33-39:

[10] Նույն տեղում, էջ 43:

[11] Նույն տեղում:

մը և վարչական կարգերի ներմուծումը՝ հնարավորինս մոտ ընդհանուր նահանգային կարգին»[12], թեև ի հայտ եկան «գլխավոր կառավարչին նախարարություններից անմիջական կախման մեջ դնող բոլոր անհարմարությունները»[13]: Միաժամանակ, բարեփոխումը համարելով «տխրահիշատակ»՝ նա եզրակացնում է, որ Կովկասում չկա իշխանության, հետե- վաբար նաև գործողությունների միասնություն[14]:

Պատմաբան Վ. Իվանենկոն, որը ստեղծել է ծայրամասի «կառավարման համակարգի վիճարկելիության» հայեցակարգը, գտնում է, որ Գանի (կառավարական բարեփոխումը նախապատրաստող այսրկովկասյան հանձնաժողովի նախագահ - Ա. Հ.) նախագծում չկար ոչ մի միտք, ոչ մի նորարարություն, ոչ մի ուշադրություն տեղական առանձնահատկություններին և կարիքներին[15]: «Նոր կարգը առաջացրեց համընդհանուր դժգոհություն … ահավոր ձևապաշտությունը խճճել էր կառավարման ողջ համակարգը – ոչ ոք չէր համարձակվում դիմել նույնիսկ գավառապետին՝ զանցառելով տեղամասային ատենակալին»[16]: Իվանենկոն բարե-փոխման մեջ միայն «Այսրկովկասի երկրամասի քաղաքացիական կառավարման կարգի մեջ խայտաբղետության վերացման» պահանջ է տեսել[17]:

Հետաքրքիր է վրաց ուսումնասիրող Ս. Էսաձեի տեսակետը: Նա ուշադրություն է դարձնում այսրկովկասյան տիրույթների կառավարման վարչական ձևերի հակասական բնույթի, այսրկովկասյան ժողովուրդների կացութաձևերի միջև անհամապատասխանության և նրանց պարտադրված կառավարման վարչատարածքային ձևերի վրա: Ս. Էսաձեն առաջին ուսումնասիրողներից էր, որ բացահայտեց 1840 թ. բարեփոխման թերությունները՝ հանձնաժողովի նախագահի անհաջող ընտրությունը, Գանի վրա դրված հանձնարարությունների անհամապատասխանությունը նրա ընդունակություններին, նրա կողմից «այլացեղ Կովկասի առանձնահատկությունների, սովորույթների և բարքերի»չուսումնասիրելը և դրա փոխարեն վերափոխումների նախագիծ կազմելը «պատրաստի ռուսական օրինակի համաձայն»[18]: Ըստ նրա, կառավարման նոր բնույթը անտեսել էր նաև բնակչության այս կամ այն խավերի պատմականորեն արմատավորված իրավունքները[19]:

Պատմաբան Ն. Մակիևսկի-Զուբոկը, որ քննել է Ռուսաստանի կազմում Այսրկովկասի տնտեսական շահութաբերության հարցը, գտնում է, որ հաստատակարգով «Այսրկովկասը ստացավ քիչ թե շատ որոշակի կառուցվածք՝ իր ձևերով նմանվելով կենտրոնական Ռուսաստանի նահանգների և մարզերի վարչություններին»[20]:

---

[12] **Вейдебаум Е.,** *Путеводитель по Кавказу, Тифлис, 1888, с. 6.*

[13] Նույն տեղում:

[14] *Проделки на Кавказе (Кавказ, 1901, N 13).*

[15] **Иваненко В. И.,** *Гражданское управление Закавказьем, Тифлис, 1901, с. 292.*

[16] Նույն տեղում, էջ 298:

[17] Նույն տեղում, էջ 379:

[18] **Эсадзе С.,** *Историческая записка об управлении Кавказом, т. 1, Тифлис, 1907, с. 68-69: Այդ մասին տե՛ս նաև* **Иваненко В. И.,** *նշվ. աշխ., էջ 290-291:*

[19] **Эсадзе С.,** նշվ. աշխ., էջ 77-78:

[20] **Макиевский-Зубок Н. Г.,** *Кавказ и кавказские наместники, М., 1906, с. 634.*

Անդրադառնանք լիբերալ ուղղության ներկայացուցիչների մոտեցումներին:

Զ. Ավալովը կառավարման վերակազմավորումները բացատրում է երկրամասի կյանքում ինքնակալության «բարենորոգչական դերով», ինչպես նաև հասարակական հարաբերությունների «ապաավատականացման» քաղաքականությամբ[21]: Նրա կարծիքով, վերին խավերի դրժգոհությունը ինքնակալությանը դրդեց հրաժարվելու «դեմոկրատական փորձերից», և կառավարությունը «կանգնեց ազնվականության շահերի հովանավորության ուղու վրա»[22]:

Մինչհոկտեմբերյան լիբերալ ուղղության մեկ այլ ներկայացուցիչ՝ Գ. Եվանգուլովը, բարեփոխման մասին արտահայտվում է է՛լ ավելի հիացական և չափազանցված: Նա «նոր հաստատությունների» կազմակերպումը համարում է մտածված միջոցառում, որը դժվարությունների է հանդիպել բյուրոկրատիզմի հետևանքով[23], «իսկ դատարանի առանձնացումը վարչությունից թեև… ամենևին էլ ոչ լիովին, երկրամասի համար, անկասկած, վաղաժամ դուրս եկավ»[24]: Ստեղծված հիմնարկների լիարժեք գործունեությունը Եվանգուլովը կապում է փոխարքա Մ. Վորոնցովի օրոք տեղական բնակչությունից աստիճանավորների նշանակման հետ, որոնց նա անվանում է «նոր մարդիկ»[25]: Նա չափազանցնում է նաև Գանի անձնական ծառայությունները բարեփոխման նախապատրաստման և իրականացման հարցում[26]:

Դեմոկրատական ուղղության պատմաբանները մարքսիզմի տեսանկյունից էին դիտարկում պատմական անցյալի ըմբռնումը: Դ. Անանունը, բնութագրելով Այսրկովկասի զարգացումը XIX դ. առաջին կեսին, կազմել է հասարակական կյանքի վարչադատական, տնտեսական և հասարակական ոլորտներում ռուսական տիրապետության «հեղափոխականացման» հայեցակարգը: Միաժամանակ, նա ցույց է տալիս ինքնակալության ձրգտումը՝ ծայրամասում հաստատել կարգերի միատեսակություն, ռուսական պետականության «ոգուն» համապատասխանող քաղաքացիական հաստատություններ[27]:

Խորհրդային պատմագիտության մեջ 1840 թ. բարեփոխման գնահատման հարցում ձևավորվել է երկու տեսակետ: Պատմաբանների մի մասն այն գնահատել է բացասաբար՝ իբրև ավատական «կամայականության» փոխարինում աստիճանավորականով, իբրև կառավարումը քայքայելու «անհաջող փորձ»[28], մյուսները համարել են վարչական կառուցվածքի

---

[21] **Авалов З.,** *Армяне(Формы национального движения в современных государствах, СПб., 1910, с. 511 ).*

[22] Նույն տեղում, էջ 512:

[23] **Евангулов Г. Г.,** *Местная реформа на Кавказе, СПб., 1914, с. 10.*

[24] Նույն տեղում, էջ 14:

[25] Նույն տեղում, էջ 14-15:

[26] Նույն տեղում, էջ 11:

[27] **Անանուն Դ.,** Ռուսահայերի հասարակական զարգացումը 19-րդ դարում (1800-1870), հ. 1, Բաքու, 1916, էջ 116, 117:

[28] **Ерошкин Н. П.,** *Крепостническое самодержавие и его политические институты, М., 1981, с. 185;* **Рожкова М. К.,** *Экономическая политика царского правительства на Среднем Востоке во второй четверти XIX века и русская буржуазия, М.-Л., 1949, с. 282.*

և օրենսդրության միասնականացմանը հանգեցնող որոշակի առաջընթաց[29]: Խոսելով Գանի բարեփոխման ընդհանուր գնահատականի մա- սին՝ խորհրդային շատ պատմաբաններ (Ի. Պետրուշևսկի, Վ. Ռշտունի, Վ. Պարսամյան և այլք) այն գնահատել են բացառապես որպես հետադիմական ձեռնարկում, իբրև ցարիզմի գաղութային քաղաքականության հերթական փուլ:

Ինքնակալության վերաբերյալ լենինյան հայեցակարգի կիրառումը օգտագործվեց Այսրկովկասի կառավարման «ավատաճորտատիրական» տեսությունը երևան բերելու համար:

«Բյուրոկրատական կենտրոնացված համակարգը և տեղական հասարակական-իրավական և մշակութային-էթնիկական առանձնահատկությունների լրիվ անտեսումը նրա (կանոնադրության – Ա. Հ.) մեջ հասցրված էին ծայրահեղությունների,»- գրում է Ի. Պետրուշևսկին[30]: Ըստ նրա՝ «1840 թ. ընդունված էր գաղութային կառավարման համա-կարգ»[31]:

Վ. Պարսամյանը «կանոնադրությունը» գնահատում է որպես «ցարական բյուրոկրատիան Անդրկովկասում ամրացնելու վճռական քայլերից մեկը»[32], որն «ամբողջապես ելնում էր ցարիզմի մեծապետական, գաղութային շահերից և չէր համապատասխանում Անդրկովկասի ժողովուրդների ո՛չ վարչական, ո՛չ քաղաքական և ո՛չ էլ տնտեսական պահանջներին»[33]:

Վ. Ռշտունին, որը ցարիզմի XIX դ. գաղութացման ուղեգծի մեջ առանձնացրել է երկու ժամանակաշրջան՝ նախաբարեփոխման և հետբարեփոխման, 1840 թ. կառավարման բարեփոխումը կանոնադրությունը ներկայացնում է որպես «ավատաճորտատիրական, ռազմաավատական կենտրոնացման և ռուսացման քաղաքականության մի ցայտուն նմուշ», որի մեջ գրեթե լիովին անտեսված էին Այսրկովկասի ժողովուրդների կյանքի բոլոր առանձնահատկությունները և օրենքների, դատարանի ու վարչության ռուսականացումը ծայրահեղ չափերի էր հասցված՝ ռուսական օրենքներ, կառավարում, աստիճանավորներ և կառավարման ու գաղութային շահագործման գործում տեղական «բարձր դասերի» նշանակության թերագնահատում: Ըստ նրա՝ «կանոնադրությունը», ըստ էության, չէր տարբերվում Պասկևիչի և սենատորներ Մեչնիկովի և Քութայիսովի «Նկատառումներից»[34]:

---

[29] **Адонц М. А.,** *Экономическое развитие Восточной Армении в XIX веке, Е., 1957, с. 105;* **Мильман А. Ш.**, *Политический строй Азербайджана в XIX - нач. XX века, Баку, 1966, с. 123, 124.*

[30] **Петрушевский И. П.,** *Система русского колониального управления в Азербайджане в первой половине XIX в. (Колониальная политика российского царизма в Азербайджане в 20- 60-х гг. XIX в., ч. 1, М.-Л., 936, с. 24).*

[31] Նույն տեղում, էջ 29:

[32] **Պարսամյան Վ.,** Ցարիզմի գաղութային քաղաքականությունը Հայաստանում, Ե., 1940, էջ 155:

[33] **Պարսամյան Վ.,** Հայաստանը XIX դարի առաջին կեսին, պրակ 7, Ե., 1960, էջ 103-104:

[34] **Рштуни В.,** *Крестьянская реформа в Армении в 1870 г., Е., 1947, с. 22,* **նույնի՝** Ուրվագծեր Հայաստանի գյուղացիության պատմության. 1828-1917, մաս Ա (1828-1878), Ե., 1960, էջ 109, 157:

Օ. Մարկովայի տեսակետից, «նոր բյուրոկրատական, խիստ կենտրոնացված կառավարման և դատարանի ձևերն ու ռուսականացման բյուրոկրատական բռնի եղանակները» երկրամասում մտցվեցին ցարական իշխանության ամրապնդման համար, իսկ Այսրկովկասի բնակչության համընդհանուր դժգոհությունը առաջացրած 1840 թ. «տխրահռչակ» բարեփոխումը միայն «բռնի ռուսականացման» հետևանք էր[35]:

Գ. Խաչապուրիձեն գտնում է, որ Գանի նախագծում սկզբունքային նոր ոչինչ չկար գեներալ Պասկևիչի և սենատորներ Մեչնիկովի ու Քութայիսովի առաջարկների համեմատությամբ, և որ նոր վարչական բարեփոխումը ոչ միայն չթեթևացրեց ցարիզմի գաղութային վարչակարգը, այլ դեռ ավելի ուժեղացրեց այն: «Անտանելի ոստիկանական ճնշումը, հրեշավոր կամայականությունը, գիշատչությունը, անհոգի բյուրոկրատիզմը, դատական քաշքշուկը և թղթագրությունը ընդունեցին հրեշավոր բնույթ»[36]:

Ծ. Աղայանը վարչական բարեփոխման նպատակը տեսնում էր «իրեն չարդարացրած պարետային կառավարման վերացման և Այսրկովկասում համառուսական վարչության ստեղծման մեջ»: Գաղութային քաղաքականության իրականացման համար անհրաժեշտ էր միասնական պետական օրենսդրություն, որպիսին պետք է լիներ 1840 թ. հաստատակարգը[37]: Բացի դրանից, նոր վարչական կարգ մտցնելը երկրամասի տնտեսական կյանքում «դրությունը բարելավելու փորձ էր»[38]: Չնայած «բարեփոխումը ուժեղացրեց ցարիզմի գաղութային և ազգային հալածանքը, բայց դրա հետ պարետային կառավարման վերացումը, անկասկած, դրական երևույթ էր»[39]: Նա երկրամասի վարչական և հասարակական-տնտեսական բարեփոխումները համարում է ժողովրդական զանգվածների համար «նոր բեռ», բայց, այնուամենայնիվ, նշում է, որ դրանք «հարված էին» դեռևս պահպանված խանական ժամանակների ավատական հիմքերին և կարգերին և ստեղծեցին պայմաններ կապիտալիստական հարաբերությունների զարգացման համար[40]:

Թ. Հակոբյանը, նշելով 1840 թ. օրենքի «օբյեկտիվորեն որոշ առաջադիմական դերը» հին խանական շրջանի վարչաձևերի և դրանց ուղեկցող կամայականությունների վերացման տեսակետից, այնուամենայնիվ, նկատի ունենալով, որ դրանով չվերացան և չէին էլ կարող վերանալ ցարական աստիճանավորների «անօրինական գործարքներն ու կաշառակերությունը»[41], այն գնահատում է որպես Այսրկովկասը «ռուսականացման ենթարկելու ռեակցիոն փորձ», Այսրկովկասում ցարական ինքնակալության վարած «գաղութային քաղաքականության տիպիկ արտա-

---

[35] **Маркова О. П.,** *Финансово-экономическое обследование Грузии в первой трети XIX в. (Исторические записки, вып. 30, 1949, с. 172-173).*

[36] **Хачапуридзе Г. В.,** *К истории Грузии первой половины XIX века, Тбилиси, 1950, с. 427, 430.*

[37] **Агаян Ц. П.,** *Крестьянская реформа в Азербайджане в 1870 году, Баку, 1956, с. 40-41.*

[38] Նույն տեղում, էջ 40:

[39] Նույն տեղում, էջ 44:

[40] Նույն տեղում, էջ 67:

[41] **Հակոբյան Թ. Խ.,** Երևանի պատմությունը (1801-1879 թթ.), Ե., 1959, էջ 382:

հայտություններից մեկը»[42]: Իսկ որպես օրենքի նպատակ, ներկայացնում է վարչականորեն Այսրկովկասի ձուլումը ռուսական կայսրությանը, նրա տեղական պայմանների ոտնահարումը[43]:

Մ. Դումբաձեն բարեփոխումը գնահատում է որպես «գաղութային կառավարման վերակազմակերպում»[44], իսկ Գ. Գալոյանը վարչական բարեփոխման իբրև հենք ներկայացնում է «միայն ռազմաստրատեգիական և քաղաքական նկատառումները», որտեղ այսրկովկասյան ժողովուրդների շահերը գտնվում էին վերջին տեղում[45]:

«Ավատաճորտատիրական» դպրոցի կողմնակիցների ակնառու թերությունը հարավային ծայրամասում ցարիզմի քաղաքականության կայսերական բնույթի և Ռուսաստանում արդյունաբերական արտադրության վիճակի անտեսումն է: Անբավարար ուշադրության են արժանացել Ռուսաստանի կառավարող շրջանում տարածաշրջանի կառավարման և տընտեսական յուրացման ուղղությամբ տարբեր հայացքների հակամարտությունը, քաղաքականության և տնտեսության հնարավորությունների միջև փոխադարձ կապերի բացահայտումը, գերատեսչությունների տվյալների և տարբեր նկարագրությունների օգտագործումը:

1840 թ. բարեփոխումը հետապնդում էր Այսրկովկասում ինքնակալության տիրապետության ամրապնդման նպատակը և միանգամայն անտեսում էր տեղական բնակչության կացութաձևի հասարակական-տընտեսական, ազգային-մշակութային շահերը և առանձնահատկությունները: Այն չփոխեց քաղաքական իշխանության էությունը: Կամայականությունը և չարաշահումները կրկին ծաղկում էին կառավարման բոլոր օղակներում: Չնայած ակնհայտ բացասական կողմերին, այնուամենայնիվ, այդ բարեփոխումը միաժամանակ ուղղված էր նաև խանական կարգերի դեմ, այդ պատճառով այն չի կարելի գնահատել սոսկ իբրև հետադիմական արարք, իսկ գաղութային քաղաքականության հերթական փուլ լինելու մասին խոսք չի կարող լինել, քանի որ «Ռուսական կայսրությունը երբեք չի եղել գաղութային տերություն՝ այդ բառի եվրոպական իմաստով»[46]:

Այսրկովկասում կառավարման բարեփոխման գնահատման նկատմամբ այլ մոտեցում ձևավորվեց XX դ. 80-ական թթ. սկզբին: Պատմաբաններից ոմանք 1840 թ. բարեփոխումը բնութագրեցին իբրև ինքնակալության քաղաքականության նոր շրջան, երբ Այսրկովկասը համարվեց Ռուսական կայսրության ծայրամաս: XIX դ. երկրորդ քառորդին ինքնակալության քաղաքականության զարգացման հետևանքով երկրամասը ճանաչվեց որպես երկրի մաս, իսկ հետո՝ հատուկ տարածաշրջան:

---

[42] Նույն տեղում, Հակոբյան Թ. Խ., Հայաստանի պատմական աշխարհագրություն (ուրվագծեր), Ե., 1967, էջ 426:

[43] **Հակոբյան Թ. Խ.,** Երևանի պատմությունը, էջ 381, **նույնի՝** Հայաստանի պատմական աշխարհագրություն, էջ 425-426:

[44] *История СССР. С древнейших времен до наших дней, первая серия, т. 4, М., 1967, с. 383-384.*

[45] **Գալոյան Գ. Ա.,** Ռուսաստանը և Անդրկովկասի ժողովուրդները, Ե., 1978, էջ 240:

[46] **Миронов Б. Н.,** *Социальная история России периода Империи (XVIII-нач. XX в.), СПб.,1999, с. 63.*

Ն. Կինյապինան 1840 թ. բարեփոխումը դիտում է որպես ներքին և ծայրամասային նահանգները «միասնական պետական օրգանիզմի» մեջ համախմբելու միջոցառում: Այն ամրացնում էր Այսրկովկասի դրությունը Ռուսական կայսրության կազմում համառուսական կառավարման ներդրման աստիճանական ուղիով՝ հարմարեցված տեղական պայմաններին[47]: Այսրկովկասում կառավարման ռուսական համակարգի օրգանների վերակազմավորումը Վ. Էվոյանը պայմանավորում է ամեն մի պատմական փուլում ինքնակալության «հետապնդած քաղաքական խնդիրների ու նպատակների» հետ համապատասխանության կենսական պահանջով: Նա կանոնադրությունը գնահատում էր որպես «խոշոր քայլ»՝ Այսրկովկասում միասնական վարչակարգ ստեղծելու ճանապարհին[48]:

Վրաստանի և Այսրկովկասի կառավարման համակարգը ուսումնասիրող Շ. Վանիշվիլին «կանոնադրության» համակարգը ներկայացնում է «գրեթե նույնական կենտրոնական Ռուսաստանի նահանգներում գոյություն ունեցող համակարգին», բայց նրա ժամանակ վարչական հաստատություններից արտաքսվեցին կովկասյան ծագմամբ աստիճանավորները, արդարադատության ոլորտից հանվեցին «վրացական, ադրբեջանական և հայկական իրավունքները», իսկ վարչության և դատարանի գործունեության մեջ տիրում էր ձևապաշտությունը[49]:

Այսրկովկասի կառավարման ուղղությամբ Ռուսաստանի կառավարող շրջանակներում տիրող տարաձայնությունների, ինչպես նաև բարեփոխման լուսաբանման և գնահատման պատկերի գնահատականն է տրված Վ. Թունյանի ուսումնասիրության մեջ: Նա «կանոնադրությունը» ներկայացնում է որպես Ռուսական կայսրության կառավարող շրջաններում երկու միտումների՝ ծայրամասը երկրի բաղկացուցիչ մաս դիտելու և կառավարման գաղութային համակարգ մտցնելու հակամարտությունից հաղթանակած դուրս եկած առաջին միտման արտացոլանք, դրանում երկու տեսակետների (լիակատար և աստիճանական) կողմնակիցների միջև ձեռք բերված փոխզիջում[50]: Նման լուծումը գնահատվում է երկրամասի կառավարման մասին եղած նախորդ առաջարկություններից «զգալիորեն բարձր», քանզի նոր հաստատակարգը պետք է ձևավորեր տեղական բնակչության «իրավահավասարությունը ռուս ժողովրդի հետ»՝ դրանից բխող բոլոր հետևանքներով, ընդ որում, տեղական առանձնահատկությունները հաշվի առնելով[51]:

Այսպիսով, 1840 թ. կառավարման բարեփոխման լուսաբանման և գնահատման հարցում ռուս, հայ և վրաց պատմագիտության մեջ եղել

---

[47] **Киняпина Н. С.,** *Административная политика царизма на Кавказе и в Средней Азии в XIX веке (Вопросы истории, 1983, N 4, с. 47, 41* ).

[48] **Էվոյան Վ. Ս.,** Արևելյան Հայաստանի պետական հիմնարկների պատմության տեղեկատու 1801-1917 թթ. (Բանբեր Հայաստանի արխիվների, 1986, N 3, էջ 13-15):

[49] **Ванишвили Ш. Н.,** *Закавказье в системе российского правления (1864-1917 гг.) (автореф. канд. дисс.), Тбилиси, 1990, с. 12.*

[50] **Тунян В. Г.,** *Административно-экономическая политика самодержавия России в I пол. XIX в., Е., 2003, с. 107.*

[51] **Тунян В. Г.,** *Административная и экономическая политика в Восточной Армении от Туркменчайского мира до Крымской войны 1828-1853 гг. (автореф. канд. дисс.), Е., 1982, с. 12.*

են տարբեր կարծիքներ և տեսակետներ: Եթե մինչխորհրդային շրջանի պատմաբանների աշխատություններում հանդիպում ենք բարեփոխումների հիմնականում դրական գնահատականների, ապա խորհրդային շատ պատմաբաններ հիմնականում դրանք գնահատել են որպես հետադիմական քայլ: 1840 թ. Այսրկովկասում քաղաքացիական կառավարում մտցնելը ինքնակալության կայսերական քաղաքականության նոր շրջան էր, սակայն բարեփոխումը անտեսում էր երկրամասի ժողովուրդների քաղաքացիական կարգավիճակը և ազգային առանձնահատկությունները: Սրանով էր պայմանավորված բարեփոխման սահմանափակ առաջադիմական բնույթը:

## ОСВЕЩЕНИЕ И ОЦЕНКА АДМИНИСТРАТИВНОЙ РЕФОРМЫ ЗАКАВКАЗЬЯ (1840 Г.) В ИСТОРИОГРАФИИ

АКОПЯН А. А.

**Резюме**

Если в досоветской историографии административная реформа Закавказья (1840 г.) получила положительную оценку, то в советской историографии она расценивалась в качестве “реакционного акта” и очередного этапа колониальной политики царизма. Согласно же точке зрения постсоветских историков, реформа имела как положительные, так и отрицательные стороны, ибо введение гражданского управления в Закавказье явилось новой вехой в имперской политике самодержавия, однако она не учитывала этнических и культурных особенностей народов Закавказья.